ԲԵՆԻԿ ՎԱՐԱԳԵՏԻ ՔԱՐՈԶԸ

(Արաստանված հոկտ. 13-ին Վանքի տաճարում)

«Ո՛չ գրոյ, այլ հոգով, զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»։
Գրիգոր Նարեկացի Ո. 3—6.

Տիեզերքի Տիրոջ, յաւիտենական ճարտարապետի ձեռքը գեղեցիկ էր կերտել այն երկիրը։ Նրա հիմքը դրել էր չորս մեծ. գետի ակունքների վրա, նրա շուրջը ահեղ լեռների շարքեր շաղել, որ պար բռնած, թև թևի, թիկունք թիկունքի տուած հսկաների նման պահպանն կանգնեն այն մարգարտաթաւալ ակունքների վրա, զրկեն նրանց հովիտները քաղկատարած զրկով, որ չար հողմերը չարշաւեն, մրրիկները չը խուժեն նրա ալան ծոցը, որ դաժանութիւնը չը թունաւորէ նրա մեղմ ու անոյշ օդը։ Հզօր ճարտարապետի մուրճը լեռների լանջերը բացել, բիւրաւոր կչկան աղբիւրներ էր քաշել նրանց ստինքներից, որոնք կաթուածների զրաբոցով վազում են դէպի դաշտ ու հովիտ՝ զովութիւն փռելու։

Նա լի բռնեալով իր ձեռքի առատութեան եղջիւրից թափել-թափել, լցրել էր լեռ ու հովիտ, դաշտ ու դուրսն պէտ-պէտ՝ նուշ ու անուշ պտուղներով, կենդանութեան անսպառ հացով։

Պա՛հ մի ճարտարապետն իր մուրճը դրել, նկարիչն իր վրձինն է առել ու լերկ լեռնները կանաչ վերարկուով, անտառների ճոխ վարսերով զարդարել, երկրի երեսը բիւր երփներանգ ծաղիկներով զուգել, որոնց բոյրն՝ իբրև անուշութեան խունկ ու կընդրուկ՝ բարձրանում է դէպի վեր, դէպի Ջինջ երեքը, դէպի Ստեղծագործողի աստղալառ ապարանքը։

Այս այն երկիրն է, ուր մեր նախնիք իրանց բոյնը հիւսեցին, այս Եդեմի դրախտն է, հայ բանաստեղծի խնամած «Հայաստան, երկիրը դրախտավայր, դու և ընկել իմ հայրենիքդ»։

Այս հողն ու ջուրը, ընկել հայութեան այս բուրաւէտ որոշանը անդրանիկ ու հզօր կապն եղաւ հայ հոգիների մէջ, հայկական միութեան էն զօրեղ գրաւականը։ Նա սիրած ու պաշտած հայրենիքի ծոցում հայն իր քաղաքական կեանքի, կենսակրթութեան կրօնքի, լեզուի հիմերը դրաւ, որոնք ոսկեղէն շղթաներով էլ աւելի ամուր կապեցին հային հայրենիքի հետ։

Բայց այն որ դրախտն է, որի պարիսպների տակ, որի թաւուտների մէջ դարանակալ օձը, խանութեան ու նախանձի թունը բերնում չի սողում։ Արեւելքի ու Արեւմուտքի հզօր ազգերն իրանց ժանտ հաւասացքը, իրանց աչքը յառեցին այն թանգագին մարգարիտ վրա, որ Հայաստան էր կոչվում. ու դարերով բանակ բանակի հետևից, Սեմանայ շարան-շարան մութ ամպերի նման իջան մեր աշխարհ իրար ձեռքից

խլելու այն մարգարիտը, նրանով իրանց փառքի բարձունքը, իրանց թագի պսակը զարդարելու։ Եւ այդ պատերազմների արդեանների դաշտերում ոմանակ եղաւ Հայաստանը, չէնն՝ անչէն, ապատն անապատ դարձաւ, բոյսն ու ծաղիկ նրանց ձիանց սմբակների տակ չորցան։

Հայ քաղաքական կեանքի հիմերը շարժեցին բռնաւորները, բայց այս դեռ կործանման ահեղ անաւորութիւնը չէր. ոչ մի ազգ արարածներով չի տարվել դէպի անդունդները, արեան ծովում չի խեղդվել։ Առաւել վտանգաւոր են այն ժամանակ գործիչները, որոնք մի ազգի հոգին են թունաւորում, որոնք բութ դանակով, առանց արիւն վոթեալու, հոգիների մեռելիւնն են խլում։ Կուզե՞ս մի ազգ քաջել դէպի յաւիտենական մոռացութիւնը, դէպի անդունդը, կոյտե՛ նախ նրա կրօնական կապերը։ Անմնայն բարձր տենչանքը, ամենայն ոգեորութիւն, որ մարդու հոգին դէպի վեր է քաշում, լինի հայրենասիրութիւն, լինի որդեսիրութիւն, լինի փառք, լինի հաւատ, լինի գիտութիւն, կրօնական զգացմունք է, կապերից հզորագոյնը մի ազգի որդոց հոգիների մէջ։

Եւ օտարների կրօնքը, չաստուածները ծպտեալ հագուստով մտաք գործեցին Հայաստան, անարիւն պատերազմ յայտարարեցին հայ կրօնքին, կործանեցին նրա բագինները հայ սրտերում և իրանք տեղը նստան։ Հայն արհամարհեց իր տենչանքներն, իր կրօնքը, պաղեցաւ իր աստուածներից և օտար աստուածների գիրկն ընկնելով նրանց ներշնչումներով օտարին մոտեցաւ պտղով։

Օտար ներշնչումները, օտար սատանան փորձութեան ենթարկեցին հային և քաղաքական սատարիզում փառասէրների հոգին գոռանալով՝ օտար գիրքեր, օտար ոսկի, օտար ճոխութիւն, օտար փառք առաջարկեցին մեծան մէջ հայ նախարարներից շատերին, որոնք իրանց պարտքերը մոռանալով՝ բռնութեան մարակով դաղեցին իրանց հեգ ժողովրդին, ուռացան իրանց երկրից, ըՆրոստացան իրար դէմ, արհամարհեցին հայ թագաւորներին և ընդհանուր պառակտում առաջ բերելով մայր հայրենիքում՝ քաղաքական անկախութեան համար գերեզման պեղեցին։ Օտար գիւանագիտութեան օձաշունչ ներշնչումներից մայր Հայաստանը իր իսկ ծոցից մանր ու խոշոր օձեր ծնաւ, դաւադրութեան գարշ հերոսներ, որոնք հայ կեանքի վրա ամօթանքի մուրը քսեցին։ Այդ օձերի թոյնից թունաւոր ու թաւալգլոր ընկան արիները, ընտիր հայերը, որ լուսացող պսակն էին հայոց փառքի։

Օտար շունչը, օտար խորշակը փչեց և հայի դէմքին, բերանի մէջ անդամալոյծ դարձնելով նրա լեզուն։ Թէև մեզ անծանօթ մթութեան մէջ, բայց նշմարելի է, որ հիանալուց հայը իր գիրն ու գրականութիւնն է ունեցել, իր ոսկեգնիկ կապը ազգային միութեան։ Բայց ինչպե՞ս չը գիտենք, դեւերը գողացան այն գիրն ու հայի ձեռքը օտարի գիր տուին։

Այս տխուր վիճակի մէջ էր Հայաստանը IV դարում, իր քաղաքական անկման ճանապարհն բռնած, երբ քրիստոնէութիւնը վրա հասաւ մեծ Լուսաւորչի ձեռքով։ Քրիստոնէութիւնը, որի բարոյական ներշնչումներին կարօտ էր հայը, հեռացուց օտարներից հայու սիրտը պահ մի, բարոյական միութիւն ստեղծեց հայ ազգի մէջ, բայց նա իր հիմունքները ազգային հողում վրա չը դրաւ։ Նա աչ ու ձախ կործանեց, ինչ որ հային կարող էր յիշեցնել նրա անցեալը։ Նրա յաղթական դրօշը ազգային անապատի վրա փոփոխեց։

Հայը գիր չունէր, որ իր գրով Աւետարան կարդար։ և ահա սև ճարեկներու։ Երանիներով Յունասատանից՝ յոյն, Ասորիքից՝ ասորի քահանաներ ողողեցին Հայաստան իրանց գրով ու դպրութեամբ ուսուցանելու հայ մանուկներին, իրանց լեզուով տարաձեալ Քրիստոսի Աւետարանը։ Դրանք առաքեալներն էին աւելի շատ իրանց տէրութիւնների, քան քրիստոնէութեան։ Մի ազգ կործանելու համար դիւանագէտի ձեռքին ամենալաւ միջոցը կրօնքն է։ Կրօնքի պատրուակով որոշ քաղաքական դաւանանք արագապէս է հաստատվում։ Եւ յոյն ու ասորի քահանաները աջողութեամբ պիտի պսակէին իրանց առաքողների յոյսերը հայոց լեզուն սպանելով ու հայութեան արմատը բրելով, եթէ հայ հանճարը չը վառվէր ու չը լուսաւորէր նրանց բերած խաւարը մեր երկիր։

Անդունդի բերանում հայ միտքը, զգացմունքը, կամքը առաջ մղեց Պարթև Սահակին, չնաշխարհիկ մեսրոպին, որոնք հոգու տանջանքով հայ գիրն ստեղծեցին։ Ոտ գետի ափերին, ուր հայ թագաւորն ու նախարարներն իրանց զօրքով, հայ հայրապետն իր կրօնական դասով, հայ ժողովուրդն իր միլիոնաւոր բազմութեամբ ընդ առաջ ելնելով իր անման վարդապետին հայ գիրն ընդունեց, այդ օրը հայի փրկութեան, ազգի ազատութեան արշալոյսն էր ծագում։ Հայոց գիրը Ծնող մայրն է հայ հոգիների միութեան։ Ոտ գետի վրա այդ միութիւնն էր ծնում հայ ազգն իր լրութեամբ։

Հայոց գիրը լոկ տառ չէր, այլ հոգի։ Նա հայ հոգուց, հայ վսեմ տենչանքներից էր բղխել։ Նա հոգի էր, զօրութիւն։ Իսկ ինչ հոգի է, այն հրաշալիք է, աստուածային շունչ երեսին, կնիքը վրան։

Եւ հոգեղէն գիրը հրաշք գործեց։ հայացի դաստիարակութեամբ մնված ս. թարգմանիչների խումբը հայացի կազմակերպեց

ազգային եկեղեցին, նրա հիմերը ազգի հոգևոր միութեան ու տենչանքների վրա հաստատելով։ Ցոյն և ասորի քահանաները, որպէս հրեշտակներից հալածական սև գնդեր, գրկեցին իրանց Աւետարաններն ու քաշվեցին հայոց աշխարհից։ Օտար դիւանագիտութեան թակարդները խորտակված էին և նրանց ցանցերի մէջ ընկնելու մօտիկ հայն ազատված։

Երբ դիւանագիտութեան երեսից դիմակն է ընկնում, այնտեղ կոպիտ ոյժի սուրն է շողում. և շողաց պարսից ահեղ սուրը հայոց գլխին Աւարայրի դաշտում. բայց «ոչ սուր, ոչ հուր, ոչ հրեշտակ, ոչ մարդիկ», ոչ աբեան հեղեղ անկարող եղան քանդել հայոց ազգային եկեղեցին, որ միութեան կապն էր, հայու հաւատի ամուր խարիսխը, ոչ լուծնել նրա գողտրիկ լեզուն, որ հոգեղէն, հոգիացած գրից թափ էր առել, ոչ բեկանել նրա յոյսը, որ գրով ուսած գիտակցութիւնից էր ճառագայթել։

Եւ հայը իր գլխին եկած բոլոր խժդժութիւնների մէջ հոգեշունչ գրի սուրը զօրութիւնով պահեց իր հոգու անկախութիւնը, իր կեանքը։

Գրի տօնը հայոց կեանքի տօնն է, ազատութեան մեծ տօնը։

Հայ ազգ, շնորհաւոր լինի քեզ քո կեանքիդ, քո անմահութեանդ վերջին 1500-ամեակը։

Բայց վայ այն ազգին, անխրատ ազգին, որ միայն իր անցեալով է պարծենում, որի ներկան մռայլ ու մշուշ, որի գիրը խաչի նման փրկութիւն էր միայն անցեալում, իսկ ներկայի համար միայն գայթակղութիւն. «Ոչ գրով, այլ հոգով, զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»։ Միայն հոգիացած գիրն է փրկում, անհոգի գիրը լոկ տառ է և մահու գործիք։

Մինչև այժմ թև առած միտքս անցեալի որոտներում էր սաւառնում. նայում եմ վար դէպի ներկան ու ծալվում են թևերս, ծալվում են նետահար թռչնի թևի նման, որ վար է գլորվում։ Այժմեան հայոց գիրը Մեսրոպի հոգիացած գիրը չէ, այլ լոկ տառ, եղջիւրաւոր սատանայի գործի, հայոց միութեան սրբազան կապը խզող դանակ, մանր ու խոշոր դաւադրութեանց թակարդ իրաբ դէմ, պարսաւագիր, գիր մեռելութեան, այլ ոչ կեանքի։ Եւ ահա տեսնում եմ հեռու մթան մէջ՝ գալիս են, նորէն Հայաստան գալիս յոյն և ասորի քահանաները իրանց Աւետարանները գրկած։

Եւ Ե. ոսկեդէնիկ դարու բարձունքից ս. Սահակն ու Մեսրոպ տխուր հայեացքով, Ռահ գետի ափերին հայկական հոգիների միութեան հիմնագիր հայութիւնը այրող ափսոսանքով մեզ են նայում։ Նրանք հարցնում են մեզ, հայ բանաստեղծի բերնով հարցնում ու պատասխան սպասում. Հայեր, «Ազգերիս մէկ, լեզուներս մէկ, հաւատներս մէկ, հայրերներս մէկ, հայրենիքս մէկ, փառքերներս մէկ, ինչո՞ւ չըլլայ սրտերներս մէկ»։

Ինչո՞ւ, ինչո՞ւ, հայեր։ Վառեցէք ձեր խղճմտանքի լապտերն ու գնացէք պատասխան տալու։